ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» փետրվար 2017թ. N 94

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ «ԱՐՄԱՎԻՐ-ՀՈՒՇԱԿԵՐՏ» ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ, հիմք ընդունելով «Յուարմի» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենի 2017 թվականի փետրվարի 17-ի գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել «Յուարմի» սահմանափակ պատասխանատվության ընկերության «Արմավիր-Հուշակերտ» միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը:
2. «Արմավիր-Հուշակերտ» միկրոավտոբուսային երթուղու սպասարկումը ժամանակավորապես թույլատրել իրականացնել «Յուարմի» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային «Արմավիր-Հուշակերտ» միկրոավտոբուսային երթուղու մրցույթ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ